

ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ՏԱՂԱՍԱՑՆԵՐ

(ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴ. ՄՈԿԱՑԻ)

Ներսես վրդ. Մոկացի, ըստ Ա. Դավթբեկեցիի պատմութեան, ծնած է Ասկնջաղիս գյուղը: Ամբաստանութեան ժամանակն աշակերտած է Բարսեղ վրդ. դավանացիի, ուսանելով արտաքին գիտութիւններ: Իր աշխատասիրութեամբ այնքան հառաջացած է, որ գերազանցել է իր ընկերներն ու վարդապետը: Նախընտրելով սնտապատական կյանքը մեկնած է նոր հաստատուած Մեծ Անապատը և այնտեղ դասատուութիւն ըրած: Իր ամենեւնի հաջողակ և անվանի աշակերտը եղած է Մելիքսեթ Վժանեցի, որ հետևելով իր ուսուցչին միասին եկած է Վասպուրական: Ներսես վարդապետ Վանա ծովուն թեջհամած է Լիմ Անապատը 1622, ուր և վախճանուած է հինգ տարի հետո 1627 թ.:

Ներսես վրդ. կոչված է Բեղլու, որովհետև մեծ պնի ունեցած է: Իր տոհմանունը եղած է Մանուկյանց ըստ մեր ձեռագրատան թ. 976 գրչագրին պարունակած մեկ վերնագրին:

Ներսես վրդ. Մոկացի մին է իր ժամանակի վանական վերածնութեան կարևոր գործիչներէն: Իր ուսուցչական գործունեութեան կից ունեցած է նաև գրական աշխատանք, մասնավորապես տաղաչափական և բանաստեղծական գրվածքներ արտագրելով:

Իրմն ծանոթ է մեղի տպուած կամ անտիպ տասնյակ մը տաղեր զանազան նյութերու վրա, ինչպես կրօնական, պատմական, քնարերգական և այլն: Այդ տաղերն են հետևյալները սկսվածներու այբուբենահամ կարգով.

1. Այսօր ցնծայ տեան.— Չեռ. Ս. Յ. թ. 135:

2. Անեղն Աստուած անճառական.— ԱՆ. Չեռ. Ս. Յ. թ. 1455:

3. Անսկիզբն Անճառ Աստուած արարող կեցո ամենայն.— Չեռ. Ս. Յ. թ. 1455, թ. 970:— Այս տաղին խորագիրն է Սյուրմեան Յուցակ, թ. 63. 40-ի համաձայն և... Ի Ներսէս վարդապետէ Բաղիշեցւոյ:

4. Աստուած անհաս անկոր անպար.— Չեռ. Ս. Յ. թ. 1455:

5. Գերազրաչ Աստուած գոլով.— Չեռ. Ս. Յ. թ. 1249:

6. Երկինքն ու գետինքն եղբայրք.— Տպ. Բագմ. 1847, էջ 331 Բ. Փարսազեան. Պատմ. Հայոց Գրականութեան. էջ 140:

7. Ղարխան յորժամ արար խորհուրդ զնալու.— Չեռ. Ս. Յ. թ. 1455, թ. 744, թ. 976:

8. Մանուկ մտավարժ էր.— Չեռ. Ս. Յ. թ. 1895:

9. Նըշխար փայտին որ շնորհեցաւ.— Բագմ. 1862 էջ 232. Յուշիկք, Ա. 277, թիւ մը ավելի ընդարձակ Հայտ. Բ. էջ 51:

10. Օրհնեալ Տէր Յիսուս փրկիչ.— Տպ. Հայտ. էջ 618—623: «Ներբողեան Գովեստի Չորեցունց Արանցն, որք եղեն Սկիզբն Անապատի Կարգել»:— Ավելի լավ օրինակ մը ունինք մեր թ. 1895 գրչագրին մեջ:

Ինչպես կը տեսնվի այս ցանկէն Մոկացի Ներսես վարդապետի տաղերն երեք

միայն տպագրված են մինչև հիմա: Կարծեմ որ իր տաղերուն մեկ ամբողջական հավաքածուն լույս ընծայի, սակայն ներկայիս նպատակով պայմաններ կը պահպին մեզի այդպիսի փափագի մը դո՛ հացում տալու համար: Ուստի սուսյժմ կրավականանանք հրատարակութեան տալով իր անտիպ տաղերն երկուքը:

1. Տաղ վասն դարիպի կենաց և մահուն ի ներսէս վարդապետէ:

Ղարիպն յորժամ արար խորհուրդ գընալու տրտմեցաւ դառնագոյն վասն ելանելոյ տանէն ելաւ լալով հառաչմամբ ողբոյ բաժանեցաւ եղբարց և իր սիրելոց:

Ասաց բարով կացէք ծընողք հայր և
մայր
և պատուական եղբայրք անցաւ
անվրթար

խմ ցանկալի որդիք մեծ և փոքր ի շար սիրելիք բարեկամք ամենքդ հաւասար:

Ելեալ գընաց հասաւ յերկիր հեռատան ոչ ճանաչէր նա դոք ոչ կայր ազգական շրջէր արխուր դիմօք ի գրունս և ի տան խնդրէր ու ոչ գտանէր տեղի հանգստեան:

Յերեկն ի քուն տանջէր մարմնով
վշտագին
գիշերն երբ հասանէր շունէր անկողին հրեշտակն էր պահապան օտար զարիպին շնորհք Հոգոյն Սրբոյ հովանի նորին:

Զինչ որ յօտար երկիր բարի տեսանէ և թե պատիւ աննս գիտէ թէ երազ է և թե ուտել ու լմպել լեզի և դառն է սրախըն միշտ սղբայ և յոգոց հանէ:

Եթէ լինի զարիպն ի մեջ հանդիսի կամ թէ ի հարսանիս և ի մեծ հարկի յամէն մարդ յընկերէն իւր յոյժ մեծարի զարիպն ի յումեքէ ոչ մխիթարի:

Եւ թէ սոքա ամէնն որ մարդկան լաւ է զարիպըն դամենայն վառթար համարէ ապայ աջն որ ամէն մարդոց դըժար է որքան խիստ աւելի զարիպըն տանջէ:

Ղարիպըն նախատի ի շատ մարդկանէ դատեալ քան ըզթռչուն յօտար երամէ ալ և քաղցն և ծարաւն զմարմինըն
մաշէ
չունի յարկ և հանգիստ եղուկ և վայ է:

Ղարիպն ըզհայրենեան յորժամ միտ ածէ ըզսէր ազգականացն և զգութն յիշէ ալ և զբարեկամացն աղեկըն պատմէ աղիքըն դալարի և աչքն արտասուէ:

Ալ և յորժամ զարիպն որ հիւանդ լինի շունի դեղ և մահիճ որ նա հեշտ պառկէ ալ և ոչ անկողին և կամ բարձ գլխի անկանելով յերկիր երեսն ի հողի:

Ալ և քան դամենայն խիստ դառն և լեղի յորժամ որ զարիպին մահըն հասանի խնդրէ ու ոչ զըտանէ եղբայր կամ որդի դառնայ յուսայ ի տէր Աստուածն ամէնի:

Ղարիպ թեպէտ այսչափ քո կեանքն
դառն է
բայց դու խիստ մի՛ հոգար Աստուած
գըրթած է
նա վասըն քո հողոյ յոյժ ողորմած է
ի կեանս ալ և ի մահ գքեզ
նախախնամէ:

Յուսա թէ մեղաւոր եմ ի մեղաց քաւէ և թէ արդար և սուրբ փառօք զարդարէ բարով ի հայրենիքըդ հասուցանէ սրպէս մեծըն Յակոբ զոր Մովսես պատմէ:

Ի թուականիս մերոյ սեռիս հայկազեան Ռ Կ և Ե ամին ի լրման տաղըս շարադրեցաւ քան ողբերգական կենացըն զարիպին և վասըն մահուն:

Երգողք տաղիս այսմիկ եղբայրք յուսով ի ձէնց հայցեմ վասըն զիս յիշման
 պատուական զներսէս անուն նրասառ ողիս անարժան :
 այլ և սատուածասէր լըսողք միարան Զեռ. Ս. Յ. Թ. 1455 և Թ. 714

**ՈՂԲ ԶՂԶԱԿԱՆ ԽՕՍԲ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱՂԱԶԱՓԵԱԼ Ի ՆՈՒԱՍՏ ՈԳՈՅ
 ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ**

Անսկիզբն անճառ Աստուած արարող էփցս ամենայն
 արարեր զմարդն ի հողոյ և ետուր հողի բանական :
 Աստուած նորոգող մարդկան ի մեղացըն մեր նախնական
 արբեցէր ըզմեզ ի մեղաց և լըցէր շնորհօք զանազան :
 Քանզի չարըն անդնդական որ արար ինաս բազմազան
 մարտեաւ ընդ յիմար հոգոյս և արար զիս մեղաց կոխան :
 Իմ մեղք զիս խելաց թափեաց և զրկեաց զհոգիս բանական
 լըցաւ յիս զըրոցըն բան մեղքն հանէ զիմաստըս մարդկան :
 Իմ մեղք զիս շնորհաց զրկեաց և արար թափուր և ունայն
 կորուսի զմեծութիւն զհոգևոր դանձն անապական :
 Զքանքանարն որ ի քէն առի ի շնորհաց հոգևոյդ տիրական
 ոչ շահեցուցի ըզնայ կորուսի ընդ վայր զամենայն :
 Մաքուր և պայծառ եղէ երբ առի շնորհըս յաւազան
 այժմ աղտեղութեամբ լըցաւ եղկելի եղէ անպիտան :
 Ես մարդ ի պատուի էի և լցեալ վասօք հրաշական
 մեղօք հէնց թափուր եղէ զերդ յիմար անասուն անբան :
 Պայծառ ի վառ աստղ էի, լի լուսով էի ի ծագման
 մեղօք իմ նուազեցայ չիջաւ լոյս հոգոյս բանական :
 Ես ծառ պտղարեր լի զոր անկեաց աջդ անեղական
 յանկարծ չորացաւ մեղօք կու այրէ հուրն անշիջական :
 Ես ծաղիկ պայծառ լի ուսղեալ ցօղովդ վերնական
 յետոյ խորշակաւ հարաւ և եղէ յոյժ ոտից կոխան :
 Անուշ հոտով լի էի որպէս խունկ և իւղ օծութեան
 մեղօք վերացաւ յինէն և եղէ դատարկ և ունայն :
 Լուսափայլ սակի էի և պատկեր սուրբ արքայական
 թագեցայ ի չարք մեղաց ժանդեցայ և եղէ խոտան :
 Իմ մեղքըն հողմոց նըման զիս վարեաց յոյժ մոլորական
 տարաւ քարէ քար երևա որպէս խոխ ի յաւուրս աշնան :
 Իմ մեղքըն թանձր ամպոց նըման չար կարկուտ երեր ինձ սպանման
 և հար և տանջեաց զհոգիս և արար զամէն խոց և դան :
 Իմ մեղքըն ծովու նըման ծաւայէր խիստ արձակ և յայն
 Քարշէր զիս ի մէջ առէր, միշտ շարժի պահէ յերկրման,
 Իմ մեղքըն հրո նըման բարկացէր բոցով բորբոքմամբ
 և եկեալ պատեալ է զիս կու այրէ սաստիկ տոչորմամբ :
 Իմ մեղքըն ինձ որդունք ծնան առաւել չար քան բոզազան
 անքուն անմահ են նօքա, միշտ տանջեն անվրճարական :
 Իմ մեղքն ինձ իսաար էամ, զիս պատեաց մութ ըստուերական

Կրկեաց ի յանեղ լուսոյն, վայ հոգոյս ի յահեղ ստեան:
 Եղուկ ինձ հազար բերան, եմ լցեալ մեղօք ամենայն
 վախեմ սեւերես լինիմ, յորժամ դաս տէր ի դատաստան:
 Յայնժամ նախատինք կրբեմ առաջի մեծի բարձության
 ծառայ շար և վատ զրսեմ, երթ տանջիր անյեղր յախտեան:
 Իմ տէր քեզ մեղայ դոչեմ հառաչեմ սրբախ. զըղջական
 յաշացս արտասուք թափեմ, լալով դամ քեզ յանդիման:
 Ի քէն թողութիւն խնդրեմ սղորմած Աստուած յախտեան
 ալ յումեքէ ճար շունիմ, բայց ի քեզ յուսամ անխափան:
 Փրկեա զիս նախատանաց անիծից դատարարութեան
 Եւ ի դժոխոց շարեաց, տանջանացն յախտենական:
 Ի խաւարային քանտէն լալ աշաց, կրճել ատամանց
 յանշիջանելի հրոցն թունաւոր և անքուն սրղան,
 յանլուծանելի կապէն, ծրծրմբոց դաքշահոտութեան,
 և ալ բազում տանջանաց, բարեխօս քեզ սուրբ ամենայն:
 Մընող Աստուծոյ մերոյ Մարիամ կուս անապա[կա]ն
 ընդ նրմին կցորդելով կարապետն քո բանին ճայն,
 զլուխըն մարտիրոսաց Մանիաննոս մեծ նախապկայն,
 լուսատուն աղգիս Հայոց սուրբ Գրիգոր պետըն Պարթևեան,
 Ի ուք առաքելոց սրբոց, մարդարէքն համանդամայն,
 Հայրապետք հանուրց աղգաց, վարդապետք սուրբ աստուածաբան,
 Մարտիրոսք բարձաշարշարք, ճղնաւոր սուրբ հայրք ամենայն,
 Մաքուր և անբիծ կուսանք, ալ և դասք սրբոց վերնական:
 Փառք քեզ մարդասէր Աստուած թաղաւոր անեղ անխափան
 համազոյ երրորդութեանդ միշտ երկրպագեմք յախտեան:
 Ոգեալ բանս սղրերգական ի թղբին սեպս հայկազեան
 Ռ. Կ. Է. ամին, ժամանակս դամ և նեղութեան:
 Ողբալով ի ձէնջ հայեմք հոգևոր կղբարք ամենայն
 յիշեցէք ի տէր Քրիստոս զմեղուցեալ Ներսէս անարժան:
Նորայր վարդապետ Մովսէս

Երուսաղեմ

